Գործընկերություն
հանուն Սյունիքի

Funded by the European Union

People in Need

WINNET GORIS

Հայկական Կարիտաս
Armenian Caritas

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպությունների հավաստագրման վերաբերյալ

2023

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ) կողմից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնող կազմակերպությունների հավաստագրման վերաբերյալ ուղեցույցը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի՝ «ՎԻՆՆԵԹ Գորիս» զարգացման հիմնադրամի և «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության համագործակցությամբ իրականացվող՝ «Գործընկերություն հանուն Սյունիքի. բարելավված համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի շրջանակում:

Հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետը:

Funded by the European Union
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Հավաստագրման նպատակ

Հավաստագրման ընթացակարգ

Հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություններ

Հավաստագրման իրականացման գործընթացի տևողություն

Հայտի լրացման կարգ

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման համար պարտադիր պայմաններ

Հավաստագրման հայտի և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման կարգ

Հավաստագրման հաջորդականությունը քայլերով

Հավաստագրման վերաբերյալ իրավական ակտի հղում

Հարցեր և պատասխաններ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեության հավաստագրումն իրականացնում է սոցիալական աջակցության բնագավառում կառավարության լիազորած մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ԱՍՀՆ), որը հաստատում է հավաստագրման հանձնաժողովի եզրակացությունը կամ չի ընդունում այն՝ հիմնավորելով հանձնաժողովի եզրակացությունը չընդունելու պատճառները՝ եզրակացությունը համապատասխան նշագրմամբ վերադարձնելով հանձնաժողովի նախագահին:

Այն կազմակերպությունները, որոնք ցանկություն ունեն մասնակցել ԱՍՀ նախարարության կողմից հայտարարվող դրամաշնորհային մրցույթներին, և մատուցել ծառայություններ՝ պետք է նախապես հավաստագրվեն՝ ՀՀ Կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի 1078-Ն որոշման պահանջներին համապատասխան:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿ

Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման նպատակը՝ տրամադրվող ծառայությունների որակի ապահովումն է:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հավաստագրման համար առաջին գլխավոր պահանջը գրանցված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպություն լինելն է:

Սոցիալական ծառայությունների մատուցման դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու պատրաստակամություն ունեցող կազմակերպությունները՝ սոցիալական ծառայություններ մատուցելու հնարավորություն ունենալու համար պետք է հավաստագրվեն ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի 1078-Ն որոշման պահանջներին համաձայն:

Հավաստագրման ենթակա ծառայությունները տրամադրվում են տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաներին, բնակության որոշակի վայր չունեցող, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց:

Կազմակերպությունները հավաստագրվելու համար պետք է բավարարեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին՝ կոմունալ, սանիտարահիգենիկ և հակահրդեհային անվտանգության, ինչպես նաև տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու համար նախատեսված տարածքի ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին, աշխատողների թվին և հաստիքներին, նրանց աշխատանքային պայմաններին և մի շարք այլ չափորոշիչներին:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը՝

- տնային պայմաններում,
- բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում,
- բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություններում,
- սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում:

Երեխաների (այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների) խնամքը՝

- սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում:

Որպես ժամանակավոր օթևան կացարանով ապահովելը՝

- որոշակի բնակության վայր չունեցող անձանց,
- ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

Յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեություն կարող է հավաստագրվել՝ անկախ այլ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեությունը հավաստագրելու հանգամանքից:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ծառայություններ տրամադրելու նպատակով ԱՍՀ-ի կողմից հավաստագրման գործընթացը կազմակերպող հանձնաժողովը հաստատում կամ մերժում է հավաստագրման համար սահմանված հայտը և դրան կից պահանջվող բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԱՅՏԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հայտատուի անվանումը, պետական գրանցման համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), գտնվելու և հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման վայրը (իսկ տնային պայմաններում խնամք տրամադրելու դեպքում՝ սպասարկման տարածքը):

Հայտատուի կապի միջոցները (հեռախոսահամարը, առկայության դեպքում՝ նաև էլեկտրոնային հասցեն և ֆաքսը):

Հայտատուի կողմից հայցվող՝ հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն (ծառայություններ) տրամադրելու գործունեությունը:

Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման համար նախատեսված աշխատողների ընդհանուր թիվը և տվյալ բնագավառում մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների թիվը:

Հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման վերաբերյալ հայտատուի՝ նախկինում ունեցած փորձի և աշխատանքային գործունեության (առկայության դեպքում) մասին տեղեկություններ:

ՀԱՅՏԻՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

հայտատուի գրանցված կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները.

հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, իսկ տարածքը վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով տիրապետելու դեպքում՝ նաև համապատասխան պայմանագրի բնօրինակը և դրա պատճենը.

հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման համար նախատեսված աշխատողների թվի և հաստիքների մասին հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը և աշխատողների աշխատանքային գրքույկի պատճենները, իսկ աշխատողների մասնագիտական կրթություն և (կամ) որակավորում ունենալու դեպքում՝ համապատասխան փաստաթղթերի (դիպլոմներ, վկայականներ) պատճենները, բժշկի (բժիշկների) առկայության դեպքում՝ այդ անձանց կողմից բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքը հաստատող՝ բժշկական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիայի պատճենները.

հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքում անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու մասին հայտատուի հայտարարությունը կամ այդ տարածքում անվտանգությունն ապահովելու մասին հայտատուի և համապատասխան կազմակերպության կամ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության միջև կնքված պայմանագրի պատճենը.

- հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքում պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «911» ծառայությանը միացված լինելու մասին համապատասխան պայմանագրի պատճենը.

- կախված հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության տեսակից՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության և (կամ) սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնի և (կամ) կացարանի ներքին կարգապահական կամ համակեցության կանոնները՝ հաստատված հայտատուի համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից.

- հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ՝ պահանջները բավարարելու մասին հայտատուի հայտարարությունը.

- տեղեկանք՝ հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ.

- նախատեսված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ՝ վավերացված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ.

- Հայաստանի Հանրապետության օրենքներով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, լիազորած մարմինը կարող է իրականացնել անհրաժեշտ գործողություններ՝ փաստաթղթերում արտացոլված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու նպատակով:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հավաստագրվում են այն կազմակերպությունները, որոնք ապահովում են տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմանները, տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու համար նախատեսված տարածքի ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, միաժամանակյա խնամք ստացողների (բնակվողների) առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջները:

Երեխաներին խնամք տրամադրելու գործունեությունը հավաստագրելու համար դիմած կազմակերպությունները, սահմանված պահանջներից բացի, տվյալ սոցիալական ծառայությունը տրամադրելու համար նախատեսված տարածքում պետք է ունենան դասապատրաստման և խմբային աշխատանքների համար նախատեսված սենյակներ, երեխաների տարիքային խմբերի առանձնահատկություններին համապատասխանող անվտանգ և բարեկարգ խաղահրապարակներ և խաղասենյակներ, ինչպես նաև ապահովեն երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները:

Որպես ժամանակավոր օթևան կացարանով ապահովելու գործունեությունը հավաստագրելու համար դիմած կազմակերպությունները, բացառապես երեխաների համար նախատեսված կացարան ունենալու դեպքում, նշված պայմաններից բացի, տվյալ կացարանում պետք է ապահովեն նաև երեխայի խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ նվազագույն չափորոշիչները:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՒ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Հավաստագրման համար
հայտն ու պահանջվող փաստաթղթերն
անհրաժեշտ է էլեկտրոնային եղանակով
ներկայացնել Աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն՝
https://e-request.am
հարթակի կամ
info@mlsa.am
էլեկտրոնային հասցեի միջոցով:

Փաստաթղթերը ստորագրվում և հաստատվում են
կազմակերպության տնօրենի կամ նախագահի
կողմից և ուղարկվում են սկանավորված
տարբերակով:

ԱՍՀՆ դրամաշնորների մրցույթների
հայտարարությունները հրապարակվում
են հոկտեմբեր-դեկտեմբեր ամսիներին՝
հաջորդ տարվա ընթացքում
իրականացվող ծրագրերի համար:
Մրցույթները երբեմն նաև
վերահայտարարվում են
https://armeps.am/epps/home.do
հարթակում:

Դրամաշնորհի չափը
սահմանվում է ՀՀ
կառավարության կողմից
սահմանված բյուջեով:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՅԼԵՐՈՎ

1 Ունենալ ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով գրանցված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպություն:

2 Մանրամասն ծանոթանալ ուղեցույցով ներկայացված ՀՀ կառավարության որոշման պահանջներին:

3 Ըստ սահմանված ձևաչափի լրացնել հայտը, կազմակերպության տնօրենի կամ նախագահի կողմից հաստատել ստորագրությամբ, սկանավորել ամբողջական փաթեթը:

4 Հավաստագրման համար հայտն ու պահանջվող փաստաթղթերն անհրաժեշտ է էլեկտրոնային եղանակով ներկայացնել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ https://e-request.am հարթակի կամ info@mlsa.am էլեկտրոնային հասցեի միջոցով:

5 Հայտում լրացնել հասանելի հեռախոսահամար՝ նախընտրելի է կազմակերպության տնօրենի կամ լիազորված անձի, ով իրավասու կլինի պատասխանել բոլոր անհրաժեշտ հարցերին, ինչպես նաև հասանելի էլէկտրոնային հասցե, որը մշտապես ստուգվում է:

Սխալ կամ թերություններով ուղարկված հայտի կամ կից փաստաթղթերի դեպքում, ուշադրությամբ հետևել նախարարության հրահանգներին և ուղղումներ կատարելուց հետո ներկայացնել պատշաճ տարբերակով, որից հետո սպասել հավաստագրման ստացմանը՝ օրենքով սահմանված համապատասխան ժամկետներում:

ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՂՈՒՄ

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի 1078-Ն որոշումը

https://www.arlis.am/documentview.aspx?docid=124075

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

1. Ինչի՞ համար է պետք հավաստագրվել:

Հավաստագրվել անհրաժեշտ է, որպեսզի հնարավոր լինի տրամադրել սոցիալական ծառայություններ, որոնք հայտարարվում են պետական դրամաշնորհների շրջանակներում:

2. Ի՞նչ է պետք հավաստագրվելու համար:

Լինել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո չգտնվող կազմակերպություն և համապատասխանել չափորոշիչներին:
https://www.arlis.am/documentview.aspx?docid=124075

3. Ո՞ր օրենսդրական ակտով է կարգավորվում հավաստագրման գործընթացը:

Հավաստագրման գործընթացը իրականացվում է ՀՀ Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի 1078-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4. Ո՞ր խոցելի խմբերին ծառայություններ մատուցելու համար է իրականացվում հավաստագրում:

Տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաներին, բնակության որոշակի վայր չունեցող, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց ծառայություններ տրամադրելու համար:

5. Որո՞նք են հավաստագրման համար անհրաժեշտ պայմանները:

Հավաստագրվելու համար անհրաժեշտ պայմաններն են՝ կոմունալ, սանիտարահիգենիկ և հակահրդեհային անվտանգության, ինչպես նաև տվյալ սոցիալական ծառայություն տրամադրման համար նախատեսված տարածքի ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին, աշխատողների թվին և հաստիքներին, նրանց աշխատանքային պայմաններին և մի շարք այլ չափորոշիչների, որոնք մանրամասն ներկայացված են այս ուղեցույցում:

6. Ո՞րքան է տևում հավաստագրման գործընթացը:

Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրումն իրականացվում կամ հավաստագրումը մերժում է ԱՍՀ նախարարությունը՝ սահմանված հայտը և դրան կից պահանջվող բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում:

7. Ի՞նչ պետք է պարունակի պարտադիր փաստաթղթերի փաթեթը:

1) Հայտատուի գրանցված կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները:

2) Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքի նկատմամբ հայտատուի իրավունքը հավաստող փաստաթղթերը՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը, իսկ տարածքը վարձակալությամբ (ենթավարձակալությամբ) կամ անհատույց օգտագործման իրավունքով տիրապետելու դեպքում՝ նաև համապատասխան պայմանագրի բնօրինակը և դրա պատճենը:

3) Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության իրականացման համար նախատեսված աշխատողների թվի և հաստիքների մասին հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը և աշխատողների աշխատանքային գրքույկի պատճենները, իսկ աշխատողների մասնագիտական կրթություն և (կամ) որակավորում ունենալու դեպքում՝ համապատասխան փաստաթղթերի (դիպլոմներ, վկայականներ) պատճենները, բժշկի (բժիշկների) առկայության դեպքում՝ այդ անձանց կողմից բժշկական գործունեությամբ զբաղվելու իրավունքը հաստատող՝ բժշկական գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու լիցենզիայի պատճենները:

4) Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքում անվտանգությունը սեփական ուժերով ապահովելու մասին հայտատուի հայտարարությունը կամ այդ տարածքում անվտանգությունն ապահովելու մասին հայտատուի և համապատասխան կազմակերպության կամ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության միջև կնքված պայմանագրի պատճենը:

5) Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքում պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «911» ծառայությանը միացված լինելու մասին համապատասխան պայմանագրի պատճենը:

6) Կախված հավաստագրման ենթակա սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության տեսակից՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության և (կամ) սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնի և (կամ) կացարանի ներքին կարգապահական կամ համակեցության կանոնները՝ հաստատված հայտատուի համապատասխան լիազորություններով օժտված մարմնի (կամ պաշտոնատար անձի) կողմից:

7) Հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ՝պահանջները բավարարելու մասին հայտատուի հայտարարությունը:

8) Տեղեկանք հարկային և օրենքով սահմանված այլ պարտադիր վճարների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ:

9) Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են «իսկականի հետ ճիշտ է» նշագրմամբ՝ վավերացված հայտատուի գործադիր մարմնի ղեկավարի ստորագրությամբ:

Լրացուցիչ հարցերի դեպում հնարավոր է կապ հաստատել՝
114- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գիծ
կամ info@mlsa.am նամակ ուղարկելու միջոցով: